Արարատի մարզում գործող ՀԿ-ների և երիտասարդ առաջնորդների համագործակցության հզորացում

«Կենաց ծառ» բնապահպանական հասարակական կազմակերպությունը սիրով հրավիրում է Ձեր կազմակերպության հիմնադիր և ակտիվ անդամներին մասնակցել Եվրամիության «Արեւելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ծառայության» աջակցությամբ իրականացվող «Արարատի մարզում գործող ՀԿ-ների և երիտասարդ առաջնորդների համագործակցության հզորացում» աշխատարանների շարքին:

Աշխատարանների նպատակն է նպաստել Արարատի մարզում գործող ՀԿ-ների և երիտասարդ առաջնորդների մոտ նորարար ռազմավարություններ նախագծելու և աշխատանքային խոչընդոտները հաղթահարելու հմտությունների զարգացմանը: Հանդիպումների ընթացքում մասնակիցները բացահայտելու են ինչպես կազմակերպել ՀԿ-ների ֆինանսապես կայուն և կանաչ այլընտրանքների կիրառմամբ զարգացումը:

Տեղեկատվություն աշխատարանների մասին և ժամանակացույց.

- Հանդիպումները տեղի կունենան Իմփաքթ Հաբ Երևանում (Մելիք-Ադամյան 2/2, 5-րդ հարկ), դեկտեմբեր և հունվար ամիսներին՝ ամսական երկու անգամ (ոչ աշխատանքային օրերին):
- Աշխատարանների լեզուն հայերենն է:
- Աշխատարանները վարելու են Իմփաքթ Հաբ Երևան համայնքի ոլորտի առաջադեմ մասնագետները:
- «Կենաց ծառը» հոգալու է մասնակիցների տեղափոխումը և լանչը:
- Յուրաքանչյուր աշխատարանի տեւողությունը՝ 4-ական ժամ, ներառյալ լանչի մեկժամյա ընդմիջում:

Դասընթացին կարող են դիմել այն մարդիկ, ովքեր՝

- ունեն ՀՀ քաղաքացիություն կամ ՀՀ մշտական կացության կարգավիճակ,
- հանդիսանում են ա) ՀՀ Արարատի մարզում գրանցված ՀԿ-ի հիմնադիր կամ խորհրդի անդամ, բ) կամավորական աշխատանք են իրականացնում ՀՀ Արարատի մարզում գրանցված ՀԿ-ում, գ) անկախ երիտասարդ առաջնորդ են Արարատի մարզում հետագա գործունեություն ծավալելու ակնկալիքներով,
- պատրաստ են մասնակցել Երևանում ոչ աշխատանքային օրերին տեղի ունեցող բոլոր 9 հանդիպումներին:

Մասնակցության համար դիմողները պետք է.

- Ներկայացնեն ինքնակենսագրություն կամ ռեզյումե՝ նկարագրելով կրթությունը, աշխատանքային փորձը եւ այլ ձեռքբերումները,
- Լրացնեն հայտի ձեւանմուշը՝ https://goo.gl/7U9hDQ :

Ծրագրի առավելությունները.

Աշխատարանների ավարտին մեկ մասնակից հնարավորություն կստանա լուծել իր կամ Արարատի մարզի մեկ այլ համայնքում առկա խնդիրը: Տվյալ խնդրի լուծման համար կիրառվելու է աշխատարանների ընթացքում ստացած գիտելիքներն ու հմտությունները, աշխատարանների մասնակիցների մտավոր և ֆիզիկական աջակցությունը, ինչպես նաև «Կենաց ծառ» հասարակական կազմակերպության անմիջական օժանդակությունը:

Ծրագրի ակնկալվող արդյունքներ.

- Մասնակիցները ձեռք են բերելու նոր գիտելիքներ և հմտություններ:
- Մասնակիցները ձեռք են բերելու փոխհամաձայնեցված և միավորված գործողություններով խնդրի լուծման փորձ:
- Մեկ համայնքում առկա խնդրի լուծում:
- Արարատի մարզում գործող ՀԿ-ների և քաղաքացիական առաջնորդների համագործակցության հզորացում:

Հայտերը պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան 2017թ. նոյեմբերի 25-ը, ժամը 23:59: